

25.09.2016թ.

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ «ՔԱՂԱՔԻ ՕՐ»
ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Պատվարժան տիկնայք և պարոնայք

Միրելի սևանցիներ,

հարգարժան հրավիրյալներ, քաղաքի հյուրեր

«Քաղաքի օր» տոնակատարության մասնակիցներ

Մեպտեմբերի 25-րդ օրը լույսով, ջերմությամբ և օրհնանքով է բացվել մեր քաղաքի վրա: Դեռևս 2012թ. նոյեմբերի 10-ին քաղաքին վերադարձվեց իր տունը նշելու իրավունքը, ու արդեն 5-րդ տարին է՝ մեր քաղաքի կենսագրության մեջ վերականգնվել է լավագույն ավանդույթներից մեկը՝ որպես ապացույց մեր համախմբվածության ու միասնության:

«Քաղաքի օր» տոնակատարությունը միաժամանակ անցած մեկ տարվա ընթացքում իրականացրած ծրագրերի ու համայնքապահպան ձեռնարկների ինքնատիպ հաշվետվություն է, ինչպես նաև նոր գաղափարների սկիզբը:

Այսօր, երբ կրկին հատվել են ճանապարհները, ու օրն էլ տոնական հրավեր է կարդում, ես ուզում եմ ևս մեկ անգամ բարձրաձայնել, որ սա մեզանից յուրաքանչյուրի տոնն է, բոլոր նրանց տոնը, ովքեր այս հող ու ջրի վրա կառուցեցին իրենց երեկը, այն ամրապնդում են այսօր ու քարը քարի վրա դնելով՝ իրենց քաղաքի վաղն են դիմավորելու:

Մեզ համար շատ կարևոր է, թե ինչպիսի քաղաք ենք ուզում ունենալ վաղը, ինչ ենք ժառանգելու մեր երեխաներին և թոռներին: Այն, ինչ արվել է երեկ ու շարունակվում է այսօր, պետք է ունենա իր տրամաբանական ընթացքը՝ միտված ապագային:

Իսկ մինչ այդ անհրաժեշտ է փոխել վերաբերմունքը մեր շրջապատի ու մեր քաղաքի նկատմամբ, ապրել քաղաքի օրով, փորձել ավելացնել լավը, ձգտել ու փնտրել միջոցներ ու հավատալ:

Ես հավատում եմ Սևանի ապագային, ուզում եմ, որ յուրաքանչյուրիս մեջ ապրի ու ծիլեր տա այդ հավատը, որն օգնելու է առաջ նայելու ու աշխատելու: Սևանցին պետք է դառնա միակամ ու հաստատամիտ: Ամեն ինչ պետք է ծնվի մեր մտքերում ու կյանք առնի մեր գործերում: Դժվար է՝ գիտեմ, սակայն անհնարին ոչինչ չկա, երբ միավորվում ենք նույն գաղափարի շուրջ, երբ վստահում ենք մեկ մեկու ու մեր մեծ ընտանիքի խնդիրները փորձում ենք լուծել միասին՝ յուրաքանչյուրն իր տեղում, իր հնարավորությունների սահմաններում, պատասխանատվության իր չափաբաժնի գիտակցմամբ:

Այսօր բոլորիս մտորումների, խոսակցությունների առանցքում Սևանն է, որը, որպես բնակավայր՝ այս տարի նշում է իր հիմնադրման 174-ամյակը, սակայն, որպես քաղաք՝ Սևանը երիտասարդ է, ընդամենը՝ 55 տարեկան: Քաղաքների կայացման ու կենսագրության մեջ սա շատ կարճ ժամանակահատված է, սակայն սևանցու համար՝

դժվարություններով ու հաղթանակներով, վայրիվերումներով ու վերելքներով գրված պատմություն, որի ստեղծողն ու ժառանգորդն ենք մենք:

Տասնամյակների ընթացքում մեր պատվարժան այրերի ու դեկավարների, մանկավարժի ու բժշկի, շինարարի ու բանվորի, ազատամարտիկի ու մտավորականի, պարզապես սրտացավ, բանիմաց ու հայրենասեր մարդկանց արարող, նվիրված աշխատանքի շնորհիվ Սևանը կարողացավ իր դեմքն ու դիմագիծը ունենալ հանրապետությունում, անգամ դուրս գալ իր փոքրիկ տնից ու ներկայանալ աշխարհին:

Սա մեր տունն է, ու մենք՝ նրա բնակիչները, ունենք շատ կարևոր առաքելություն՝ յուրաքանչյուրս մեր տեղում և մեր հնարավորությունների սահմաններում պետք է նպաստենք, որպեսզի Սևանը հաստատ ու վստահ նայի վաղվան, որպեսզի այսուհետ կյանքի կոչվեն ոչ թե գոյատևման, այլ զարգացման ծրագրեր: Դրանք առաջին հայացքից կարող են թվալ հավակնոտ, անիրատեսական, սակայն, համոզված եղեք, ցանկության, հավատի և աշխատասիրության դեպքում մեր բոլոր ծրագրերը դառնալու են իրականություն:

Անցած 4 տարիները ասվածիս լավագույն վկայությունն են, կատարված աշխատանքը ակնառու է, ծրագրերը՝ տեսանելի և կառուցողական: Լավագույն վկայություն է նաև Ասիական զարգացման բանկի կողմից Սևան համայնքի ընդգրկումը «Զարգացող քաղաքներ» ծրագրում, որը նոր էջ է բացելու Սևանի զարգացման ու առաջընթացի համար:

Օրը նաև պատեհ առիթ է գնահատելու այս քաղաքի բնակիչն ու տանտիրոջը, արժևորելու նրանց վաստակը, պատվախնդիր աշխատանքը, ովքեր էջ առ էջ գրեցին ու հարստացրին Սևան քաղաքի կենսագրությունը:

Մեկը քաղաք կառուցեց ու դեկավարեց, մյուսն այդ քաղաքում ապրողին ուսուցանեց ու բժշկեց, մեկը ձոն նվիրեց իր քաղաքին, մյուսը երիտասարդական թրթիռ հաղորդեց ու մանկան պարգություն: Յուրաքանչյուրն իր տեղում ու իր չափով արեց կարելին ու հնարավորը, որ Սևանը ապրի, շնչի և առաջ նայի:

Քաղաքը մեզանից յուրաքանչյուրի կարիքն ունի, պահանջում է ամենօրյա ուշադրություն և հոգատարություն, ինչպես մեր երեխաներն ու թոռները, և միայն այդ դեպքում է այն դառնում հպարտ ու ինքնավստահ:

Սիրելի համաքաղաքացիներ,

Դուք էլ համոզվեցիք, որ տարին դժվարին էր միաժամանակ հազեցած էր ծրագրերով ու պահանջում էր ամենօրյա աշխատանք: Կաթիլ առ կաթիլ, սակայն հաստատուն բոլորս միասին առաջ ենք տանում քաղաքի համար կենսական նշանակություն ունեցող ծրագրերը՝ լուծում տալով տարիներով կուտակված խնդիրներին:

Համոզված եմ՝ տարվա ընթացքում հպարտանալու քիչ առիթներ չենք ունեցել. իրականացված ծավալուն աշխատանքների ու ծրագրերի շնորհիվ ամբողջացվել է Սևանի դիմագիծը, ընթացքի մեջ են մի շարք ծրագրեր, որոնց շնորհիվ արդեն իսկ ուրվագծվում են 2017թ-ին իրականացվող աշխատանքները:

Արվում է հնարավորը, ու շատ կարևոր է, որ տեղական իշխանությունն իր կողքին զգա իր բնակչի ամուր ու հաստատուն ձեռքը, լսի քաջալերող խոսքը:

Այս տոնակատարությունն էլ մեր սիրո դրսևորումն է մեր քաղաքի հանդեպ, որ մեծ ու փոքրին, քաղաքում և նրա սահմաններից շատ հեռու ապրող սևանցիներին մեկտեղել է՝ միասին լինելու, միասին ուրախանալու մեծագույն բերկրանքը վայելելու:

Միրելի համաքաղաքացիներ

Տոները գալիս են ու գնում, սակայն տոնի շնորհիվ ձևավորված մթնոլորտը, հավաքական ոգին, ծնված գաղափարները դեռ երկար ուղեկցելու են մեզ՝ դառնալով կոնկրետ գործ, մի լավ ձեռնարկի սկիզբ այստեղ ապրողների և Սևանից շատ հեռու գտնվողների համար, որոնց միավորում է սևանցի լինելն ու սևանցու պատվախնդրությունը:

Եկեք մեկ անգամ ևս հիշենք, որ պարտք ունենք, և մեր քաղաքը իմ, քո, բոլորիս հոգածության ու սիրո կարիքն ունի: Այդ սիրո արտահայտությունն էլ մեր ձեռնարկներն են, լավագույն գործերը, որոնց շնորհիվ Սևանը դառնալու է ոչ միայն այսօրվա, այլ նաև ապագայի քաղաք:

Տոնակատարության հարգելի մասնակիցներ

Վայելեք այս օրը, ապրեք օրվա պարզևաճ հաճելի պահերով, քայլեք ձեզ համար պատրաստված տոնակատարության՝ հիշողություն արթնացնող, հաճելի պահեր պարզևող, հանդիպումներով պսակված հանգրվաններով:

Միրելի քաղաք

Այսօր քո օրն է. Դու էլ վայելիր այն քո բնակիչների, քեզ այցի եկած հյուրերի ներկայությամբ, քո զավակների սիրով շրջապատված:

Շնորհավոր տոնդ, Սևան

Գրիր քո կենսագրությունն ու պատմությունը, վստահ քայլիր ապագային ընդառաջ քեզ արժանի ներկայով:

Շնորհակալություն ուշադրության համար: